ՀՏԴ 398

Գրականություն

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ
E-mail: Manush.balayan@mail.ru

ՄՏԱԾՈՒՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ Ռ. ՀԱՏՏԵՃՅԱՆԻ «ԱՌԱՍՏԱՂ» ԵՎ «ԱՌԱՍՏԱՂԻՆ ՄԻԻՍ ԿՈՂՄԸ» ՎԵՊԵՐՈՒՄ

Հոդվածում խոսվում է ժամանակակից գրողի աշխարհաճանաչողության ու գիտական որոշ շրջանակների տեղյակ լինելու կարևորության մասին: Քննության առնված «Առաստաղ» (1983թ.) և «Առաստաղին միւս կողմը» (2000թ.) վեպերում, հավատարիմ մնալով գոյապաշտական գեղագիտության սկզբունքներին, սփյուռքահայ նշանավոր գրող Ռ. Հատտեճյանը հոգեբանի խորաթափանցությամբ և փիլիսոփայի դիտողունակությամբ պատկերել է դժվարություններին դիմակայող անհատի կամքի ու հույսի ոգորումները, մարդկային էության հոգեբանական բազմաշերտ դրսևորումները, սահմանել կյանքի ու երջանկության համար պայքարելու փիլիսոփայական հիմնավորումները:

Արժանապատվության ու ինքնահաստատման խնդրին հեղինակը անդրադառնում է անձի անհատական հոգեբանության, բարոյականության և ինքնագնահատման տեսանկյունից, իսկ մարդու գոյության ու երջանկության համար կարևորում է հիշելու ունակությունը և երևակայելու կարողությունը:

Հատտեճյանական լուծումները սովորական ու միաշերտ չեն. գեղագիտական նուրբ ընդգծումներով բացահայտելով հասարակության ու անհատի փոխհարա-

բերությունները, կերպարների բնավորության հոգեբանական շերտերը՝ փիլիսոփա գրողը կատարում է կարևոր եզրահանգում. մարդը իր անցյալին կապված է հիշողությամբ ու պատասխանատվությամբ և որտեղ էլ լինի, հենց անցյալով է միշտ ձգտում իմաստավորելու իր գոյությունը:

Բանալի բառեր՝ *գոյապաշտական փիլիսոփայություն, փոխկապակցում, հիշողություն, երևակայություն, հոգեբանական անցումներ, արժանապատվություն, վերհուշ, շահադրդում, երկմտանք, օտարացում:*

М. Балаян

ФИЛОСОФИЯ МЫШЛЕНИЯ В РОМАНАХ Р. АТТЕЧЯНА «ПОТОЛОК» И «ДРУГАЯ СТОРОНА ПОТОЛКА»

В статье говорится о важности познания современного писателя мира и знакомства с определенными научными кругами. В рассмотренных романах «Потолок» (1983г.) и «Другая сторона потолка» (2000г.), оставаясь верными принципам экзистенциальной эстетики, известный армянский писатель Диаспоры Р. Аттечян с проницательностью психолога и наблюдательностью философа изобразил дух воли и надежды человека, противостоящего невзгодам, многослойные психологические проявления человеческой натуры, определил философские обоснования борьбы за жизнь и счастье.

Автор рассматривает проблему достоинства и самоутверждения с точки зрения индивидуальной психологии, морали и самооценки личности, а для существования и счастья человека подчеркивает способность запоминать и фантазировать.

Аттечяновские решения неординарны и многослойны: раскрывая тонкие эстетические акценты взаимоотношений общества и личности, психологические слои характера персонажей, философ-писатель делает важный вывод: человек связан с своим прошлым памятью и ответственностью, и где бы он ни был, именно прошлым всегда стремится осмыслить свое существование.

Ключевые слова: *экзистенциальная философия, взаимосвязь, память, воображение, психологические переходы,*

достоинство, воспоминание, корысть, нерешительность, отчуждение.

M. Balayan

PHILOSOPHY OF THINKING IN R. HATTECHYAN'S NOVELS "THE CEILING" AND "THE OTHER SIDE OF THE CEILING"

The article talks about the importance of a modern writer's knowledge of the world and acquaintance with certain scientific circles. In the reviewed novels "The Ceiling" (1983) and "The Other Side of the Ceiling" (2000), remaining true to the principles of existential aesthetics, the famous Armenian writer of the Diaspora R. Hattechyan, with the insight of a psychologist and the observation of a philosopher, depicted the spirit of will and hope of a person resisting adversity, multilayered psychological manifestations of human nature, determined the philosophical foundations of the struggle for life and happiness.

The author examines the problem of dignity and self-affirmation from the point of view of individual psychology, morality and self-esteem of the individual and for the existence and happiness of a person emphasizes the ability to remember and fantasize.

Hattechyan's solutions are extraordinary and multi-layered: revealing the subtle aesthetic accents of the relationship between society and the individual, the psychological layers of the characters' character, the philosopher-writer makes an important conclusion: a person is connected with his past by memory and responsibility, and wherever he is, it is the past that always strives to comprehend his existence.

Key words: *existential philosophy, interrelation, memory, imagination, psychological transitions, dignity, remembrance, self-interest, indecision, alienation*

Ժամանակակից գրողների համար սփյուռքահայ նշանավոր արձակագիր Ռ. Հատտեճյանը կարևորում է աշխարհաճանաչողությունը ու գիտական որոշ շրջանակների տեղյակ լինելը, և ըստ նրա՝ դա անհրաժեշտ է ոչ թե սովորեցնելու, այլ նյութը ճիշտ ու ամբողջական ներկայացնելու համար։ «Մեր օրերուն գրագէտը այսպէս կամ այնպէս, պարտի «կէս-գիտնական» մը ըլլալ.... Բայց գրագէտը մասնաւոր ուշադրութիւն պիտի ընէ, որպէսզի գիտնականի հովեր մը չառնէ, «սորվեցնող» մարդու մը կերպարանք մը չզգենու։ Ամէն ինչ այնպէս պիտի պատմէ, որ կարծես թէ ընթերցողը գիտէ այդ բոլորը։ Ուստի զանոնք պիտի պատմէ ընթերցողին մատչելի ձեւով, հասկանալի ձեւով։ Գիտական տուեալները գործնական կեանքի

տուեալներու հետ հաշտեցնելով, գիտութիւնը կեանքի դրուագ դարձնելով»[1],- դեռևս իր գրական գործունեության 40-ամյակի առթիվ տված հարցազրույցի ժամանակ սեփական անփոփոխ տեսակետն է ասել ճանաչված գրողն ու գրականագետը:

Ռ. Հատտեճյանը գիտության ասպարեզը միշտ կապում է մարդկային էությունն անմիջականորեն քննության առնող երկու ճյուղերին՝ փիլիսոփայությանն ու հոգեբանությանը: Եվ «մարդը դիտելը» նրա ամենաառաջնային ու ամենասովորական հատկությունն է:

Իր «Առաստաղ» (1983թ.) և «Առաստաղին միւս կողմը» (2000թ.) վեպերում Ռ. Հատտեճյանը հավատարիմ է մնացել գոյապաշտական փիլիսոփայության սկզբունքներին և հոգեբանի խորաթափանցությամբ պատկերել է դժվարություններին դիմակայող անհատի կամքի ու հույսի ոգորումները, մարդկային էության հոգեբանական բազմաշերտ դրսևորումները, սահմանել կյանքի ու երջանկության համար պայքարելու փիլիսոփայական հիմնավորումները:

Ռ. Հատտեճյանը՝ որպես «մարդ անհատի հոգին պեղող եզակի գրիչ»[2], կերպավորման ու բովանդակային առանցքներում միշտ էլ առաջ է մղում փիլիսոփա գրողին հարիր խորքային ու բազմաշերտ տարածություններ: Ինչպես վկայում է գրականագետ Ս. Դանիելյանը. «Դիպաշարի (սիւժէ) ընձեռած սեղմ, սահմանափակ հնարաւորութիւններում վիպասանն իրեն դրսեւորում է հոգեբանական խորաթափանց վերլուծական կարողութեամբ, ներապրումի համընդգրկուն բացայայտումներով: Նա երեւան է բերում անհատի հոգեւոր նկարագրի լիութիւնը, ապրած կեանքի փիլիսոփայական իմաստաւորումը»[3]:

Ինչպե՞ս է մարդը իմաստավորում իր կյանքը:

Հատտեճյանը իրավամբ մարդու համար կենսական առաջնահերթություն է նկատում հոգեկան աշխարհի կայունությունը: Առանց հիշողության և երազանքի մարդը մանկուրտ է, միայն ֆիզիկական գոյություն և բնազդ, ինչպես առաստաղին նստած ճանճը:

Հիշողությունից զրկված գերին՝ մանկուրտը, Չ. Այթմատովի «Եվ դարից երկար ձգվում է օրը» վեպում, չնայած ֆիզիկապես առողջ է և ուժեղ, նաև իրական կապանքներից զերծ, սակայն անծայրաձիր տափաստանում գնալու տեղ չունի: Փախուստի փորձ անգամ չի անում, իր ծնողներին անգամ չի ճանաչում և սպանում է իրեն փրկելու եկած մորը:

---

[1] ***Հատտէճեան Ռ.*** *գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին, Իսթանպուլ, 1987, էջ 43:*

[2] ***Շառոյեան Լ.***, *Յաւերժօրէն սիրելի «Մերին Պոլիսը», Իսթանպուլ, 2003, էջ 24:*

[3] ***Դանիէլեան Ս.,*** *«Ռոպեր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն», 1996., էջ 107:*

Ներկայացնելով մանկուրտի ողբալի վիճակը՝ Այթմատովը մարդուն հիշողությունից զրկելը համարում է «բարբարոսության ամենադաժան ձևը»[1]:

Իսկ Հատտեճյանի հերոսը՝ անդամալույծ ու տկար, շնորհիվ հիշելու, մտածելու և երազելու անսահմանափակ հնարավորությունների, ազատ է և ինքնուրույն: Եվ դա է պատճառը, որ նրա մեջ շարունակում են վերապրել ծնողների պայծառ կերպարները, իր կյանքի ուրախ և տխուր պահերը, դա է պատճառը, որ նա իրեն երբեք դժբախտ չի նկատում: «Ի՞նչ կ՚ընէի, Աստուա՛ծ, եթէ չունենայի յիշելու կարողութիւնը»[2],- այսպես է մխիթարվում անկողնուն գամված մարդը:

«Առաստաղ»-ում քայլ առ քայլ բացվում են ծերունու մտածողության ծալքերն ու հորիզոնները: Հոգեբան գրողը ստեղծում է այնպիսի տրամաբանական իրավիճակներ, որոնք հեշտությամբ կապում են ներկան ու վերհուշը, նաև ներկան ու կանխատեսելին, ընդ որում՝ կարևոր պայման է վերհուշի և ապագայի ոչ թե նկարագրական, այլ մտածական-դատողական արտահայտությունը. սա Հատտեճյանի գրչի առանձնահատկությունն է:

Ռ. Հատտեճյանը մարդու գոյության ու երջանկության համար կարևոր է համարում նաև երևակայելու կարողությունը: «Չկարենալ երեւակայել: Օ՜, ահաւասիկ երկուորեակ եղբայրը յիշել չկարենալու տառապանքին»[3],- գրում է Ռ. Հատտեճյանը՝ ամբողջացնելով անդամալույծ ծերունու պատկերացումը երջանկության մասին:

«Առաստաղ»-ի առաջին էջերում Ռ. Հատտեճյանը կատարում է իր կարևոր եզրահանգումը. մարդու մարմինը չափազանց խոցելի է, և դա հաճախ կարող է լինել անսպասելի ու ակամա: Սակայն մարդու հոգին երբեք սեփական կամքից անկախ չի վնասվում. քանի դեռ անհատը չի ընդունում իր անկարողությունը, քանի դեռ կամքով ու մտածողությամբ կարողանում է հաղթահարել փորձությունները, ուրեմն նա ապրում է և չի կոտրվի:

«Մարդը, ինչ տարիքի ալ հասած ըլլայ, առանց երազի չի կրնար ապրիլ»[4],- գրել է Ռ. Հատտեճյանը և նույն համոզվածությամբ հարստացրել սիրելի հերոսի առօրյան՝ մտածումի ու երազի պարտադիր ժամ սահմանելով նրա համար. «Ամէն օր մտածումի որոշ յայտագիր կը պատրաստէի.... Յայտագրին մէջ նախապատուութիւն կուտայի ընկերային նիւթերու: Մարդուն յարաբերութիւնը մարդու հետ, մարդուն յարաբերութիւնը իր ծնողքին կամ զաւկին հետ, մարդուն յարաբերութիւնը

---

[1] ***Այթմատով Չ.***, *Եվ դարից երկար ձգվում է օրը, Երևան, 1983, էջ 128:*

[2] ***Հատտէճեան Ռ.***, *Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006, էջ 178-179:*

[3] *Նույն տեղում, էջ 180:*

[4] ***Հատտէճեան Ռ.,*** *Յուշատետր 39, Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ, Իսթանպուլ, 2000, էջ 317:*

պետութեան հետ...»[1]: Հեղինակը քայլում է հերոսի ընտրության շավիղներով՝ բացահայտելով նրա մտքի, զգացմունքի և հոգու բոլոր ծալքերը: Այս ամենը ներհյուսելը, ասելիքը տրամաբանորեն իրական ու գեղագիտորեն պատկերավոր ներկայացնելը ենթադրում է ստեղծագործելու հմտություն, գեղարվեստական բարձր ճաշակ, ինչպես նաև իմացության պատշաճ մակարդակ:

«Առաստաղ»-ում մտքի և հոգու հետ կապված «գործողությունները» գերազանցում են իրական դեպքերին: Սակայն գրողը, այնուամենայնիվ, վարպետորեն չափավորում է հոգեփիլիսոփայական ազդեցությունների շրջանակը՝ միախառնելով գլխավոր կերպարների սովորական առօրյային:

Վեպերում հաճախ առտնին դեպքերն են տեղիք տալիս մարդկային հոգու հուզումներին ու ալեկոծումներին, և հենց այսպիսի փոխկապակցումով է գրողը խուսափում «սովորեցնողի» կեցվածքից, քանզի վիպական գործողությունների և հերոսի մտածողության շերտերը բաղադրված են թեմատիկ ընդհանրություններով, և նուրբ անցումները հնարավորություն են տալիս շրջանցելու միջավայրի և խոսքի միօրինակությունները:

Հիվանդանոցային առօրյայի, անընդհատ փոխվող հիվանդների ու «մշտական բնակիչ» ծերունու փոխհարաբերությունների նկարագրությամբ հեղինակը միաժամանակ քննում ու թափանցում է մարդկային հոգու ամենանուրբ խորքերը: Խուսափելով սովորական դեպքերի պարզ պատկերավորումից՝ գրողը այդ ամենը անցկացնում է ծերունու հոգու և մտածողության ավազանով, ներկայացնում ոչ թե որպես կատարված փաստ, այլ որպես զգացմունք և ապրում:

Իրականության ու վերհուշի, սովորական աննշան դեպքի ու նրան կապված հիշողության միահյուսման հոգեբանական անցումները լրացում են իրար, հնարավորություն տալիս բացահայտելու հասարակության ու անհատի փոխհարաբերությունները, կերպարների բնավորության հոգեբանական շերտերը:

Հիվանդասենյակի ժամանակավոր «բնակիչները» ծերունուն առնչվող հանգուցակետերում բնորոշում են հասարակական տարբեր սոցիալական խմբերի կեցությունը և մտածողությունը: Նրանցից ամեն մեկն արժանանում է ծերունու ուշադրությանն ու վերաբերմունքին, մտորումների, ապրումների, վերագնահատումների, հուզումների նոր առիթներ ստեղծում նրա համար:

Եթե Մարկոսի հիվանդության ընթացքը ծերունուն հիշեցնում է հոր վերջին օրերի տառապանքը, ապա տիկին Ալիսի ներկայությունը խանդավառում է հոգեկան այն բոլոր հույզերն ու սարսուռները, որ ժամանակին զգացել էր միմիայն իր կնոջ նկատմամբ:

---

[1] ***Հատտէճեան Ռ.***, *Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006, էջ 24:*

Հատակին ընկած խնձորի կեղևը անմիտ արկածից՝ բանանի անփույթ նետված կեղևից տուժած ծերունուն ստիպում է վերապրել հունվարյան այն նախատոնական առավոտը, երբ իր միակ մտահոգությունը աղջկան և թոռանը հարմար նվերներ ընտրելն էր, և ոչ մի անհանգստություն կամ կանխազգացում չուներ իրեն սպասվող դժբախտության մասին: Սակայն «ամէն մարդ ճակատագիր մը ունի եւ պէտք է հաշտուի անոր հետ»[1]: Դժբախտաբար, ոչ ոք չգիտի՝ ինչ ճակատագիր է վիճակվելու իրեն. սա է կյանքի փիլիսոփայությունը՝ ըստ ծերունու:

Ո՞վ է Մարկոսը. առաջին տպավորությամբ՝ որկրամոլ ու շատախոս մեկը, որ խանգարում է ծերունու մտորումներին: Սակայն իրականում հեղինակային մտահղացմամբ Մարկոսի պատահական, երբեմն ոչ տեղին ասված խոսքերի և արարքների հակադարձմամբ, առաստաղին ծնվում են նոր խոհեր ու հիշողություններ, կամ էլ գեղագիտական ու ճանաչողական տեսանկյունից դիտարկվում է պահի զուտ հոգեբանական լարվածությունը:

Մարկոսի կերպարը ունի մեկ կարևոր եզրահանգում. մարդու մասին չի կարելի դատել ըստ երեսանց ասած մի քանի խոսքերի կամ պատահական արարքների: Իրականում հոգու ավազանի խորքերում կարող են պահվել այնպիսի զգացմունքներ ու ալեկոծումներ, որոնք դրսևորվում են միայն այն ժամանակ, երբ մարդը հասնում է «ամենաբարձր վայրկյանին», որը, ըստ Հատտեճյանի, ծայրահեղ իրավիճակն է: Այս պարագայում է Մարկոսը մարդկայնորեն զգում անդամալույծ մարդու տառապանքը՝ չքայլելու, հիվանդանոցը երբեք չլքելու անխուսափելի ճակատագիրի ծանրությունը. Մարկոսը պարզապես մարդկայնորեն ապրումակցում է ծերունուն, ասում այն, ինչ սրտանց ցանկանում է՝ միաժամանակ գիտակցելով, որ դա անհնար է. «Դուն ալ Աստուծմով ժամ առաջ կ՚ելլես, ախպա՛ր»[2]:

Ինչպես տեսանք, Ռ. Հատտեճյանի արձակի գեղագիտական առանձնահատկություններից է ժամանակային տարբեր հարթակներում կատարված կամ կատարվող իրադարձությունների ներհյուսումը, նրանց միջև ընդհանրությունների որոնումն ու հոգեբանական մանրամասնություններով վերլուծելն ու մեկնաբանելը:

Իրականությունն ու վերհուշը փոխկապակցելու նույն մտահղացմամբ է պատկերված Արամիկի և տիկին Ալիսի՝ ծերունու հիվանդասենյակում հայտնվելու դրվագը: Օտար կնոջ ներկայությունը, մանավանդ նույն սենյակում գիշերելը ծերունուն դրդում են վերհիշելու իր կնոջը՝ Վերժինին, նրա հետ անցկացրած երանելի օրերը, վերապրելու նրան կորցնելու անդառնալի ցավն ու ափսոսանքը:

---

[1] ***Հատտէճեան Ռ.,*** *Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006, էջ 58:*

[2] ***Հատտէճեան Ռ.****., Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006 , էջ 72:*

Ռ. Հատտեճյանը՝ որպես հոգեբան գրող, քննության է առնում սեռային զգացողությունների և տանջող հուշերի միախառնումից ծնված տղամարդու թաքուն տագնապները, հոգեկան հակասություններն ու համակերպումները:

«Ռոպէր Հատտէճեանի գլխաւոր ցանկութիւնը հաշմուած, ֆիզիկապէս խեղուած անձնաւորութեան մէջ մարդկային լիարժէք յոյզերի ամբողջութիւնը պաշտպանելն է»[1],- նկատել է Ս. Դանիելյանը:

Բնական ու հոգեբանորեն իրատեսական են ծերունու՝ տիկին Ալիսի կողմից ուշադրության արժանանալու ձգտումը, միայնակ կնոջը արժանապատվորեն օգտակար լինելու, նրան ինչ-որ ձևով սփոփելու տղամարդկային կեցվածքը: Սակայն ծերունի-տիկին Ալիս փոխհարաբերության մեջ նույնքան իրատեսական է, որ կնոջ վերաբերմունքը խղճահարությունից այն կողմ չի անցնում. տիկին Ալիսի անհանգստությունները կապված են միմիայն իր որդու առողջության մասին մտածմունքներին: Նա չի էլ նկատում տղամարդու գնահատող հայացքը և չի մտածում, որ ինքը կարող է հուզել ու հետաքրքրել նրան:

Դիպվածային պահերին առնչվող հույզերի, մտածումների արտահայտությունները, սեռի փիլիսոփայության եզրահանգումները, անցյալի պատկերների և իրական դեպքերի համադրումը հոգեբան գրողի գրչի տակ ձեռք են բերել յուրօրինակ գունավորում, որը լրացնում-ամբողջացնում է հերոսներից յուրաքանչյուրի ապրումը:

«Առաստաղին միւս կողմը» հատորում Ռ. Հատտեճյանը Սաթենիկի մտածումների սահմաններում դարձյալ անդրադառնում է սեռերի փոխհարաբերությունների խնդրին, սակայն այս անգամ՝ լրիվ տարբեր տեսանկյունից: Այս անգամ կնոջ վիրավորված ինքնասիրության ընդվզումն ու բողոքն է, որ հեղինակը քննում է անձի անհատական հոգեբանության, բարոյականության և ինքնագնահատման տեսանկյունից:

Որպես էկզիստենցիալիստ գրող՝ Ռ. Հատտեճյանը թերևս առաջնորդվում է այն սկզբունքով, որ ծայրահեղ իրավիճակներում է մարդն իրեն դրսևորում իր էությունից բխող ամենաճիշտ պահվածքով ու երևույթով: Այս դեպքում ծայրահեղը լքված լինելու զգացողությունն է, այդքան տարիների նվիրումի արհամարհվելը, հասարակական դիրքի ու արժանապատվության վտանգումը և, ամենացավալին, կանացի խոցված ինքնասիրությունը: Սաթենիկը մտածության տագնապներով անցնում է անքուն գիշերների, արցունքների, տառապանքի ու մենության միջով: Մարդկային հոգու ծալքերը կատարելապես ճանաչող գրողի անփոփոխ տեսակետն այն է, որ յուրաքանչյուր անհատ ինքնուրույն պետք է դժվար իրավիճակից լուծում ու

---

[1] ***Դանիէլեան Ս.*** *, Ռոպէր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996, էջ 119:*

ելք գտնի՝ ապավինելով միմիայն իր վերլուծումներին ու եզրահանգումներին:

Ամուսնու՝ Հակոբի դավաճանությունն ու արհամարհանքը չհանդուրժելու և իրենց միջև խզումը հաղթահարելու անվերապահ որոշումը Սաթենիկի համար արժանապատվության ու ինքնահաստատման հարց էր, և այդ ժամանակահատվածում մենության ու տառապանքի մեջ, մտածումի բավիղներում հեղինակային մտահղացման ինքնատիպ հոգեբանական հնարանքով Սաթենիկը ինքնիրեն առաջադրում է բազում հարցեր, որոնց պատասխանները երբեք միակողմանի, վերջնական ու հաստատուն չէին կարող լինել: Այդ հարցերը վերաբերում են իր՝Սաթենիկի կնոջական հմայքին ու հրապույրներին, տղամարդկանց գրավելու արտաքին շնորհներին ու գեղեցկությանը, մանավանդ ցանկալի դիտվելու ու մատչելի լինելու տարբերությանը: «Իրականութիւնն այն էր, թէ ոչ մէկը փորձեց մօտենալ ինձի: Եւ ասիկա կրնար տառապեցնել զիս, եթէ չգիտնայի, որ այրերուն կողմէ ցուցաբերուած այդ անտարբերութեան պատճառը ես էի...Ես ամէն ինչովս արդէն կը պոռայի՝ «Ինձի չէք կրնար մօտենալ, չըլլայ, որ փորձէք»»[1],- խորհում է Սաթենիկը:

Կնոջ մտածողության մեջ սա մի յուրօրինակ խաղ է, ինքնագնահատման ու ինքնարժեզրման վարժանք. «Եվ այս նպատակիս մէջ բնաւ յետին միտք չկար: Ես պարզապէս կ՝ուզէի հայելի մը տեսնել այրերուն աչքերուն մէջ: Այս հայելին նայիլ ու հասկնալ՝ գեղեցիկ եմ, թէ ոչ, ցանկալի՞, թէ ոչ»[2]:

Ռ. Հատտեճյանը պեղում է կնոջ հոգու ամենանվիրական խորքերը՝ ի հայտ բերելով սեռի զգացողության և բարոյականության ծայրահեղ բևեռների միջև տատանվող երկմտանքը, ինքնաճանաչման ու ինքնադրսևորման կարելիություններն ու հնարավորությունները:

Ի մի բերելով կնոջական երջանկության բոլոր անհրաժեշտությունները՝ Հատտեճյանը հանգում է ամենակարևորին. «Միայն սէ՛րն է, որ կնոջը պիտի օգնէ, որպէսզի ան ինքզինքը լաւ զգայ, ինքզինքը զգայ որպէս գեղեցիկ սեռի ներկայացուցիչ: Սէրը, որ կուգայ դիմացէն ու կը տաքցնէ սիրտը»[3]:

Ռ. Հատտեճյանի խորաթափանց հայացքը չէր կարող անտեսել մարդկային և հասարակական հարաբերություններում բարոյահոգեբանական խնդիրների կարևորությունը:

Ծերունու հարաբերությունները իր հոր և դստեր՝ Սաթենիկի հետ նույն հոգեբանական գծերով են բնորոշվում, տարբերությունը միայն ձևի և ներապրումի նկարագրության մեջ է: Քննության առնենք հրաժեշտի

---

[1] ***Հատտէճեան Ռ.,*** *Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006, էջ 350:*

[2] *Նույն տեղում, էջ 350:*

[3] *Նույն տեղում, էջ 202:*

պահերը, երբ մահացավ հայրը, և երբ Կանադա էր մեկնում Սաթենիկը: Երկու դեպքում էլ նա՝ ծերունին, մերժեց հրաժեշտի պահի տառապանքը, չուզեց տեսնել ու հիշել հատկապես այդ երկու բաժանումները սիրելի մարդկանցից:

«Երբ հասկացայ, որ հայրս մեռած էր, սենեակէն դուրս ելայ եւ անգամ մըն ալ քովը չգացի...Չէի՞ կրնար շոյել մազերը, քանի մը խօսք ընել միտքէս՝ ուղղակի նայելով անոր հանդարտ դէմքին եւ զայն քանդակելով երեւակայութեանս մէջ ամբողջ մանրամասնութեամբ: Չկրցա՛յ»[1],- վերհիշում է ծերունին իր հրաժեշտը հորը, որը հանգավ որպես գավառից մնացած միակ լապտեր:

«...Գլուխը դէպի պատը դարձուց՝ առանց սպասելու, որ մենք սենեակէն դուրս ելլենք.... ու չտեսաւ սենեակէն մեր դուրս ելլելը: Չուզեց տեսնել: Մերժեց տեսնել»,-այսպես է հիշում Սաթենիկը հորը հրաժեշտի պահին:

Ծերունին անցյալն ու ապագան կապող կամուրջն է, մարդկային լավատեսության խորհրդանիշը: Նա հավասարապես մերժում է և՛ անցյալի, և՛ ներկայի ցավոտ պահերը: Իր ամբողջ կյանքում նա կարևորում է ապրելը՝ անկախ հանգամանքներից: Ամենահուսահատ պահին անգամ խեղված ու բոլորից լքված՝ իր էության մեջ ուժ է գտնում և հույսով լի նայում առաջ՝ խոսելով ապրելո՛ւ դատապարտվածության մասին:

Անհուն երևակայությամբ, սիրով ու կամքով՝ հիվանդ ծերունին անձուկ ու տխուր հիվանդասենյակում տեղավորել էր մի ամբողջ աշխարհ՝ առաստաղին արտացոլվող սիրելի պատկերներով, մտածումներով ու նրանց հետ կապված անմոռանալի դեպքերով առլեցուն, և ձեռք բերել փոքրիկ մի երջանկություն, որ միայն իրենն էր և իր համար էր տեսանելի ու շոշափելի, քանզի իր երևակայության ու մտորումների արդյունքում էր ծնվել այդ երջանկությունը:

«Մեր դարը սպաննեց այդ երջանկությունը»[2],-ցավով արձանագրում է Ռ. Հատտեճյանը: Իրարահաջորդ ազգակործան աղետները՝ տեղահանությունն ու ջարդը, պատերազմն ու արտագաղթը, անխղճորեն խեղում են սերունդների ճակատագրերը, ու ավերում բոլոր երազանքները, խառնում ընտանեկան խմբանկարները, այն բոլոր փոքրիկ ու փխրուն ուրախությունները, որ ապրեցնում են մարդկանց:

Երջանկության հատտեճյանական ձևակերպումը պարունակում է ոչ միայն երևակայություն, կամք, սեր, պայքար, այլ նաև՝ հող, տարածություն, հայրենիք, որ պետք է սնուցի մյուս բոլոր անհրաժեշտությունները: Այս պարագայում անձնական «ես» այլևս չկա, կա ընդհանրական «ես»-ը, որը

---

[1] *Նույն տեղում, էջ 36:*

[2] *Նույն տեղում, էջ 267:*

խճանկարի պես է, գոյատևել չի կարող և ոչ մի իմաստ չի արտահայտում, քանի դեռ բոլոր խիճերը իրենց տեղերում չեն:

Ծերունու և Սաթենիկի կերպարները խորհրդանշում են դարի աղետներին դիմակայող ողջ մարդկությունը, որ փորձում է երջանիկ լինել, ինչքան էլ հաշմված ու տկար, լքված ու հուսահատ լինի: «Մենք դատապարտուած ենք ապրելու»»[1],- հոր սահմանած ապրելու բանաձևը հաստատում է Սաթենիկը:

Վիպական պատումի անցյալի և ներկայի ներթափանցումներում և մտածումի շերտերում աստիճանաբար ուրվագծվում է Սաթենիկի որդու՝ Ռուբիկի կերպարը՝ իբրև ապագայի մարմնացում: Նա ընդհանրացնում է Սփյուռքի այն սերունդը, որը դեռևս կապված է իր արմատներին հիշողությամբ ու պատասխանատվությամբ: Սակայն նրանից է սկսվում անդառնալի օտարացումը՝ «բանիւ եւ գործով»:

Ծերունու և Սաթենիկի գիծը շարունակողն է Ռուբիկը, որի մտապատկերում որպես մարդկային խղճի դեմ կատարված ամենամեծ հանցանք ընդմիշտ դրոշմվել էր «Կանադա» բառը, որ իր միամիտ երեխայական շուրթերից հնչեց ու ավերեց սիրով ու հույսով կառուցված մի ամբողջ աշխարհ: Եվ ծերունու համար փրկությունը դարձյալ առաստաղն էր, նրան փարված իր մտածումն ու երևակայությունը: Այս դեպքում հատտեճյանական աբսուրդը իր խորքում մարդասիրական է, և հույսի որոնումը առաստաղի խորքերում անգամ երբեք անարդյունք ու իզուր չէ, որովհետև, ըստ գրողի, մարդու միտքը կարող է շնչավորել շրջապատի սովորական առարկաները և նրանք վերածել ապրեցնող ու «զրուցող» պատվարների և պաստառների:

Գրականություն

1. **Հատտէճեան Ռ.**, Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, Երեւան, 2006թ.:
2. **Հատտէճեան Ռ.**, Յուշատետր 47, Առագաստ դէպի բանաստեղծութիւն, Իսթանպուլ, 2000թ.:
3. **Հատտէճեան Ռ.**, Յուշատետր 39, Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ, Իսթանպուլ, 2000թ.:
4. **Հատտէճեան Ռ.** գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին, Իսթանպուլ, 1987թ.:
5. **Դանիէլեան Ս.** , Ռոպեր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996թ.:

[1] *Նույն տեղում, էջ 391:*

6. **Շառոյեան Լ.** Յաւերժօրէն սիրելի «Մերին Պոլիսը», Իսթանպուլ, 2003թ.:
7. **Այթմատով Չ.**, Եվ դարից երկար ձգվում է օրը, Երևան, 1983թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը։